ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-1-15/3 (ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3) ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված <<Ալկոհոլային խմիչք>> և <<Ծխախոտ>> տեսակի ակցիզային դրոշմանիշերի տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 15.02.2017թ. N 11/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.02.2017թ. ժամը 14-30-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մանուկյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Ենոքյանը, Ս.Ստեփանյանը, Ժ.Կարապետյանը, Լ.Զաքարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-1-15/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Վ.Մանուկյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-1-15/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ -ն (ք.Երևան, Չարենցի 25)

-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-1-15/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 28.02.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

-«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն դրանք մասնակցի կողմից հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ՀՀ դրամ
		Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ	
1	<<ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի տպագրության աշխատանքներ	288639000	346366800
2	<<ԾԽԱԽՈՏ>> տեսակի ակցիզային դրոշմանիշի տպագրության աշխատանքներ	887568000	1065081600

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին (մասնակցի հայտը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ):

2. ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-17-1-15/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգը ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Մանուկյան

Անդամներ՝ Ա.Ենոքյան

Ս.Ստեփանյան

Ժ.Կարապետյան

Լ.Զաքարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան